



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4941

550.34 (4794)

2-28

2010


ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Ա. ԱԻԱԳԵԱՆԻ.

50.34(17.94) *uv*

Է-28

ՂԱՄԱԽՈՒ ԱՂԷՏԸ

ԺՈՂՈՎԱԾՈՒ.



ԲԱԿՈՒ
Տպարան Յ. Գ. Գիլյուսարեանի.
1902.

35 28

15367

221 P 3 44-13 73

Дозволено цензурою. 21 февраля 1902 г., г. Тифлис

2002

ՇԵՄԱԽՈՒ ԱՂԵՏԸ

Այն, ինչ ենթադրում էր 1860 թւականին նշանաւոր գիտնական Աբիխ, այսօր կատարված է: Նա, քննելով 1859 թւականի երկրաշարժի հետեւանքները, իր մի գեկուցման մէջ յայտնեց, որ Շամախին մի օր հիմնահատակ կը քանդվի երկրաշարժից:

Այդ օրը անցած յունվարի 31-ն էր: Լրագրական տեղեկութիւնները միաբերան վկայում են, որ Շամախին այլևս չը կայ: Աւերակների մի ահռելի քօօս—ահա ինչ է մնացել Ղիրվանի մայրաքաղաքից: Ի՞նչ կը լինի սպագայում, արդեօք նորից բնակութիւն կը հաստատվի աւերակների վրա, թէ անթիւ դառն փորձերից խրատված ժողովուրդը կը թողնէ իր հողն ու ջուրը ու կը գնայ մի ուրիշ տեղ ապրելու, մենք չը գիտենք: Օրվայ տիուր և սարսափելի իրողութիւնն այն է, որ կովկասեան նշանաւոր, իր հնութեամբ պատկառելի մի քա-

ղաք ջնջված է մարդկային բնակութեան տեղերի ցուցակից: Եւ մեզ վրա տխուր պարտականութիւն է ընկնում տալ, թէեւ շատ համառօտ ու կցկտուր գծերով, այդ ոչնչացած քաղաքի, եթէ կարելի այսպէս ասել, մահացուցակը: Եամախին կովկասեան ամենահին քաղաքներից մէկն է: Բայց թէ երբ է նա հիմնվել—հաստատապէս յայտնի չէ:

Կիրակոս Գանձակեցին (XIII դարի պատմիչ) մի տեղ ասում է, թէ խազրաց Զաբուխաքան թագաւորը իր Շաթ որդու անունով վեց քաղաք շինեց. Շաթար, Շամքոր, Շաքի, Շիրվան, Շամախի, Շապորան:

Այս Զաբու կամ Զիբուխաքանի և նրա որդի Շաթի մասին երկար պատմում է Մովսէս Կաղանկատուացին իր «Աղուանից պատմութեան» մէջ: Դրանք արիւնարբու իշխողներ էին, որոնք կատաղի արշաւանքներ փռեցին Աղուանից երկրում և սարսափելի արիւնահեղութիւններ կատարեցին: Այդ ժամանակի Աղուանից կաթողիկոսն էր Վիրոյ, որ շատ գերիններ թափեց Շաթի ձեռքից:

Եթէ հաւատ ընծայենք այս տեղեկութիւններին, պէտք է ենթադրենք, որ Շամախին, ուրեմն, հիմնված է եօթներորդ դարում: Բայց շատ հաւանական է, որ Կիրակոսի հաղորդածը մի աւանդութիւն է միայն, իսկ ուրիշ գրաւոր տեղեկութիւններ մենք չունենք, բացի գուցէ նրանից, որ Շիրվան անունը լիշատակվում է Մովսէս Խո-

րենացուն վերագրվող աշխարհագրութեան մէջ: Որ Կիրակոսի հաղորդածը պատմական հիմք չունի, կարելի է հէնց եզրակացնել նրանից, որ Շաթ անունից չէին կարող առաջանալ Շամախի, Շիրվան անունները:

Կովկասի մասին գրողներից մէկը, Իվան Եօպէն, որ այնքան սիրում է համարձակ գիտնական հիմքերից զուրկ բացատրութիւններ տալ մեր երկրի աշխարհագրական անուններին, հետեւեալ ենթադրութիւններն է անում Շիրվան և Շամախի անունների մասին. առաջինը, ասում է նա, համարում են առաջ եկած «Շիրվան» բառերից, որոնք նշանակում են «առիւծների անտառ», «առիւծների երկիր», հիմնվելով այն բանի վրա, որ Շիրվանին շատ մօտ է Կուրի շատ ճահճոտ և եղեգնով պատած գետաբերանը, ուր հին ժամանակներից առիւծներ էին զանվում: Ինքը, Եօպէն, աւելի ճշմարտանման է համարում, որ Շիրվանը կազմված լինի «Սաւիրվան» բառերից, որոնք նշանակում են «իրերի երկիր»: Իսկ թէ ովքեր են այդ իրերը—այդ չէ ասում: Գալով Շամախուն, նա դնում է այսպիսի բացատրութիւն. «Սա-մազգա», այսինքն մագերի (մագերի) տեղ,—մի բան, որ ենթադրել է տալիս, թէ այդտեղ եղել է կռատուն: Նոյն անունը կարելի է հասկանալ և այսպէս—«Շամի-գա», այսինքն արեգակին երկրպագելու տեղ:

Վերջապէս լիշատակենք և այն, որ պարսից

Կօրագ-Շահի որդին, Խոսրով Անուշիրվահ (նշանակում է «անման հօգի»), Դերբենդ քաղաքի կառուցանողն է և աւանդութիւնը պատմում է, թէ Երրվանի երկիրը նրանից է ստացել իր անունը (VI դար):

Այսքան մութ է այդ երկրի անցեալը:

Ութերորդ դարի կէսից Երրվանը ընդունեց մահմեդականութիւն: Այդ ժամանակից էլ Երրվանի տէրերը ստացան Երրվան-շահ անունը, նրանց տիրապետութիւնը տարածված էր Բագուի վրա էլ և հասնում էր Կովկասեան սարերին: Կովկասի արևելեան մասում Շամախին նշանաւոր դեր է կատարել: Կորցնելով իր անկախութիւնը, Երրվանը մտաւ Պարսկաստանի իշխանութեան տակ, բայց երկար ժամանակ նա կուսածաղիկ էր Պարսկաստանի և Թիւրքիայի մէջ: XVI դարում Շամախին նուաճվեց օսմանցիների ձեռքով, ապա նորից անցաւ Պարսկաստանին: XVII և XVIII դարերում Երրվանը մի ուժեղ խանութիւն էր, որ իբրև Պարսկաստանի սահմանագլուխ շատ կարևոր դերք էր բռնում: Շամախին այդ միջոցներում մի խոշոր առևտրական կենտրոն էր, ուր հաւաքվում էին ապրանքներ արևելքի բոլոր կողմերից: Այդ առևտրական նշանակութիւնը բարձրացաւ մանաւանդ այն ժամանակից, երբ Ռուսաստանը սկսեց քաղաքական և առևտրական շահերի համար մօտենալ Պարսկաստանին: Շամախին էր այն կենտրո-

նը, ուր գալիս էին ուսւ վաճառականները, այդ տեղով էր անցնում միակ յարմար ճանապարհը, որ տանում էր դէպի Ռուսաստան: Աբրահամ կաթողիկոսը նկարագրում է Շամախու մեծ առևտրական ճանապարհը, որ անցնում էր Մուղանի դաշտով դէպի Պարսկաստան:

Առաջին անգամ Շամախին ուսւներին հպատակութիւն յայտնեց 1796 թւին, Զուբովի արշաւանքի ժամանակ: Բայց վերջնականապէս Շամախին, առանց մի կաթիլ արիւն թափելու, անցաւ ուսւներին 1805 թւականի դեկտեմբերի 25-ին:

Հայերը Երրվանում բնակութիւն են հաստատել շատ հին ժամանակներից: Եթէ ճիշտ է, որ Հայաստանի սահմանները մի ժամանակ հասնում էին Կասպից ծովի ափերին, բնական պէտք է լինի, ուրեմն, որ հայկական տարրը տարածված լինի այդ կողմերում նախ քան քրիստոնէութիւն ընդունելը:

Բացի դրանից, չը պէտքէ մոռանալ, որ Երրվանը հին Աղուանից երկրի մի մասն է, իսկ Աղուանից երկիրը երկար դարերի ընթացքում եղել է հայերի կուլտուրական և քաղաքական խիստ ազդեցութեան տակ: Այդ ազդեցութիւնը այնքան զօրեղ է եղել, որ բուն աղուանից ազգը չքացել է և նրա տեղ, պատմութեան աւելի լաւ լուսարանված շրջաններում, մենք տեսնում ենք հայ ազգա-

բնակութիւն:

Եթէ չը լինէին էլ այս հանգամանքները, հայերը պիտի դարձեալ իրանց բնակութեան տեղ ընտրէին Երրվանդ: Ինչպէս ասացինք, Շամախին մի շատ նշանաւոր առևտրական կենտրոն էր Կովկասի արևելեան մասերում. իսկ այդպիսի մի կենտրոն չէր կարող չը գրաւել հայերին մանաւանդ այն ժամանակներէց ՚ի վեր, երբ քաղաքական անկախութիւնը վերջացաւ Հայաստանում և հայ ժողովուրդը ցրվեց աշխարհիս չորս կողմերը, հնարաւորութիւն ունենալով համարեա միմիայն վաճառականութեան մէջ գտնել իր բարեկեցութիւնը: Երրվանի և մանաւանդ Շամախու հայ ազգաբնակութիւնը այնքան աչքի ընկնող թիւ էր կազմում XVII դարում, որ եզուիտները Շամախում քարոզչական կայան հաստատեցին կաթողիկոսութիւն հաստատելու համար: Նայն դարի վերջերում և XVIII-ի սկզբում Շամախին շատ մեծ կարևորութիւն ստացաւ հայերի համար, երբ նրանց մէջ ծագեց և տարածվեց քաղաքական ազատութեան միաքը: Իսրայէլ Օրիսի ծրագիրների մէջ Շամախին հանդէս է գալիս համարեա իբրև հայկական քաղաք. այնտեղ պատրաստվում էր հայոց զօրքը, այնտեղից պիտի առաջանար արշաւանքը դէպի Արաքսի հովիտը: Ամբողջ տանութեբորդ դարում Շամախին Արաբադի համար շատ կարևոր դեր էր կատարում: Այդ կողմերն էին դիմում հայ գաղ-

թականութիւնները, որոնք շատ մեծ չափեր ընդունեցին մանաւանդ դարի վերջում, երբ 1798 թւի ժանտախտը և սովը աւերակ դարձրին Արաբադը:

Այդ ժամանակից Շամախու զաւառում կենտրոնանում է հայերի մի մեծ բազմութիւն:

Բայց Շամախուն իր այդքան երկար կեանքի ընթացքում չէր վիճակված մի խաղաղ ու հանգիստ կեցութիւն: Շատ և շատ բաներ է տեսել Երրվանի հինաւուրց մայրաքաղաքը: Քանի նուաճողներ են եկել ու անցել, քանի անգամ է երկիրը քարուքանդ եղել և նորից վերանորոգվել: Բացի մեծ ազգերի արշաւանքներից, բացի նուաճողների յարձակումներից, Շամախին ունեցել է իր մշտական, տեղային ճակատագրական դժբախտութիւնները: Դրանք երկու տեսակ էին. մէկը մարդկային ձեռքի դործ, միւսը բնութեան անիմանալի ոյժ, քայց երկուսն էլ աւերիչ, երկուսն էլ անգութ:

Առաջին տեսակի դժբախտութիւնը կազմում էին լեռնականները, որոնք դարերի ընթացքում սովորութիւն էին դարձրել կողոպուտներ անել սարերի ստորոտներում ընկած երկիրներում: Նրանք յանկարծակի, լեռնային հեղեղի պէս, ցած էին իջնում, մրրիկի պէս տարածվում էին այս ու այն կողմ, քանդում, աւերում էին, կողոպտում էին

հարստութիւնները և վերագառնում իրանց լեռները: Չամախին շատ և շատ անգամ է ենթարկվել այդ գիշատիչ ցեղերի յանձակումներին. պատմութեան մէջ բերվում են խոշոր արշաւանքները և դրանցից մէկը տեղի է ունեցել 1720-ական թւականներին, երբ Շամախին ահագին վնասներ կրեց: Բայց քանի-քանի մանր-մուկ արշաւանքներ են տեղի ունեցել, որոնց լիշատակութիւնը չէ մնացել: Երկար տարիների արիւնահեղ պատերազմների գնով չքացաւ այն հինաւուրց պատուհասը, որ ուղարկում էին Կովկասեան լեռները դաշտերի խաղաղ ազգաբնակիւթեանը պատժելու համար:

Վերջացաւ այդ մի դժբախտութիւնը: Բայց միւսը, աւանդ, մնաց. մարդկային ոչ մի ոյժ և ջանք չէր կարող բնութեան արկածների առաջն առնել:

Գեղեցիկ է Շամախու բնութիւնը, առողջարար են նրա օդն ու ջուրը: Թւում է, թէ այդ անկիւնում մարդը պէտք է խաղաղ կեցութեան, երջանկութեան տեղ գտնէ: Բայց Շամախին մի շատ վտանգաւոր տեղ է: Բնութիւնը դրել է նրան մի ծածկված, ժամանակ առ ժամանակ իրան ցոյց տւող հրաբուխի վրա: Շամախին երկրաշարժերի բոյն է:

Ստորերկրեայ ոյժերը, անշուշտ, շատ հին ժամանակներից են իրանց աւերիչ հարուածները տալիս քաղաքին: Բայց հին ժամանակները չեն թո-

ղել տեղեկութիւններ այդ հարուածների մասին: Յայտնի է միայն, որ 1688 թւին տեղի ունեցած սոսկալի երկրաշարժին զոհ գնացին, ինչպէս ասում են ժամանակակից լիշատակարանները, մօտ 8000 մարդ:

XIX դարի ընթացքում Շամախին ութ մեծ երկրաշարժ է տեսել: Մանր, աննշան երկրաշարժեր աւելի շատ են եղել, որովհետև Շամախում համարեա սովորական, աւօրեայ երևոյթներ են գետնի տատանումները:

1806 թւին երկրաշարժը քանդեց Շամախու բերդը: 1828 թ. յուլիսի 9-ին և 28-ին Շամախում քանդվեցին 247 տներ և 30 խանութներ, չիսկ շրջակայ գիւղերում մօտ 3000 տուն:

Այնուհետև մինչև 1847 թւականը հագիստ է մնում Շամախու հողը: 1847-ին թեթև երկրաշարժ է լինում յունվարի 28-ին և 29-ին և փետրվարի 2-ին: 1848-ին, սկսած յուլիսի 10-ից մինչև համարեա տարվայ վերջը, մի շարք ցնցումներ են տեղի ունենում:

Երկրաշարժը աղէտի կերպարանք ընդունեց 1859-ին: Այդ թւին, մայիսի 30-ին, կէսօրից յետոյ ժամի 4-ին, ստորերկրեայ ուժեղ հարուածը քանդեց և վնասեց 3250 զանազան շինութիւններ:

Այդ ժամանակ Չամախին մի հարուստ նա-

հանգական քաղաք էր: Հարուածը տւեց 1 1/2 րոպէ, ահագին փլատակների տակ 400 հոգի մնացին: Սարսափը պատեց բնակիչներին և իսկոյն հարց ծագեց, որ պէտք է փոխել քաղաքը, մի ուրիշ տեղ տանել: Այն ժամանակվայ կովկասեան փոխարքայ իշխան Բարեատինսկի կարգադրեց, որ նահանգական վարչութիւնը տեղափոխվի Բագու: Մի յանձնաժողով կազմվեց վնասները որոշելու համար և յանձնաժողովը վնասները հաշուեց 1.344,000 ռուբլի: Չամախեցիները խնդրեցին կառավարութիւնից, որ իրանց 30 տարվայ ժամանակով փոխ տրվի մի միլիոն ռուբլի առանց տոկոսների և բացի դրանից ազատել իրանց հարկերից 40 տարի ժամանակով: Իշխան Բարեատինսկի, չափազանց համարելով այդ պահանջները, հետևեալ կերպով օգնեց վնասվածներին. 15 հազար ռուբլի բաժանվեց չունևորներին իբրև նպաստ, քաղաքացիները 10 տարով ազատվեցին հարկերից, պետական գանձարանը 100 հազար ռուբլի փոխ տւեց 20 տարվայ ժամանակով:

Քաղաքը տեղափոխելու հարցը մոռացվեց: Հեշտ չէ թողնել հայրենի գեղեցիկ երկիրը, ստացուածքը և գնալ ուրիշ տեղերում, կլիմայական այլ պայմանների մէջ օթևան որոնել: Ընդհատ է, շատերը հեռացան քանդված քաղաքից, բայց համեմատած մնացողների հետ՝ այդ հեռացողները մի աննշան փոքրամասնութիւն էին կազմում:

Եւ ահա 1869 թ. օգոստոսին դարձեալ երկրաշարժը ցնցում է Չամախին, դարձեալ աւերումներ է գործում:

Երեք տարի չանցած այդ օրից, 1872-ի յունվարի 16-ին, երկրաշարժը նորից աղէտ է բերում դժբախտ քաղաքի գլխին: Օրը կիրակի էր: Առաւօտեան 9 ժամ 55 րոպէին սկսվեց սաստիկ երկրաշարժ, որ շարունակվեց 43 վայրկեան: Քաղում ենք մի քանի տեղեկութիւններ այդ աղէտի մասին «Մշակի» 1872 թ. համարներից:

Երկրաշարժից այս անգամ վնասվեց Չամախու բարձրագիւր մասը, ուր հայոց թաղն է: Հայ բողոքականների ժողովարանը քանդվեց, թողնելով իր տակը 22 հոգի, մեծ մասամբ երեխաներ:

Ընդհանուր կորուստը համեմատաբար շատ մեծ էր—118 հոգի մեռածներ: Բայց քաղաքին հասած վնասը հասնում էր 1.137,000 ռուբլի գումարի: Հիմնայտակ քանդվեց հայոց Նորաշէն եկեղեցին: Կովկասեան փոխարքայ մեծ իշխան Միխայիլ Նիկոլայեվիչը 2000 ռուբլի նուիրեց վնասվածներին, իսկ Ալէքսանդր II Կայսրը—20,000 ռուբլի: Չամախում հայերից կազմվեց մի մասնաժողով վնասվածների օգտին նուէրներ հաւաքելու համար:

Չամախին նորից սկսեց դատարկվել: Այդ ժամանակ Բագուն արդէն շատ առաջ էր գնացել իբրև նահանգական-ճովափնեայ քաղաք և Չամախեցիները, մեծ մասամբ հայեր, այնտեղ գաղթեցին:

Այդքան ահագին վնասներ կրելուց յետոյ Չամախին, իհարկէ, աղքատացաւ, դարձաւ մէկը մեր գաւառական աննշան քաղաքներից: Այդ վիճակով էլ նա գոհ կը լինէր, եթէ բնութիւնը հաշտ լինէր նրա հետ: 1872-ից յետոյ եղան մի քանի անգամ աննշան երկրաշարժեր, բայց ոչինչ վնաս չը տւին և ազգաբնակիւթիւնը համարեա համոզված էր, որ այլևս չի տեսնի այնքան մեծ աղէտներ: Այդ համոզմունքին ոյժ էր տալիս այն ենթադրութիւնը, որ Բագուի նաւթային հորերը, Փօնտանները—հողի երեսն են հանուած այն ստորերկրեայ ոյժերը, որոնք մինչև այդ դուրս գալու տեղ չունէին և երկրաշարժ էին պատճառուած: Մուացված էր անցեալը: Խեղճ Չամախին մինչև իսկ լաւ օրերի երազներ էր տեսնում: Նա մտածում էր երկաթուղի ունենալ, սպասում էր, թէ մօտիկ ապագայում կուեննայ նաւթային արդիւնաբերութիւն, որ կը բերէ հարստութիւն, տնտեսական բարեկեցութիւն:

Եւ յանկարծ, յունվարի 31-ին, մի ահեղ հարուած վերջ է դնում այդ բոլոր յուսերին ու երազներին: Այսօր Չամախին մոխիրների վրա նստած մի դժբախտ է, զուրկ օրական հացից անգամ:

Վերջին տեղեկութիւններին նայելով, Չամախու ազգաբնակիւթիւնը 20,000 հոգուց է բաղկացած: Ահագին մեծամասնութիւնը թուրքերն են կազմում: Հայերի ճիշտ թիւը չը կարողացանք իմա-

նալ: Զամախու նախկին առաջնորդ Մեսրոպ արքեպիսկոպոսը մի քանի տարի առաջ հրատարակած իր զրքում ասում է, թէ Չամախում ապրում են 500 տուն հայեր:

Այդ տները այժմ չը կան, խորտակված են: Պիտի իմանանք, որ գլխաւորապէս աղքատ արհեստաւոր դասակարգն է մնացել Չամախում:

Բայց ով էլ լինի, ինչ էլ լինի—հայ թէ թուրքայսօր օգնութեան կարօտութիւն կայ:

Մարդկային սոսկալի դժբախտութիւն... բնութեան աղէտների դէմ մենք անզօր ենք մի բան անելու: Բայց այդ աղէտների զոհերի արտասուքը սրբելը—դա մեր ամենքիս սրբագան պարտականութիւնն է:

Կ Ի Ր Ը Կ Ն Օ Ր Ե Ը Ե Ջ Բ Ո Յ Ց

Նորից աղէտ մեր երկրում...

Նորից ձմեռվայ ցուրտ երկնքի տակ մարդկային հառաչանքներ, արտասուք և զիակներ, դիակներ...

Գեռ մէկը չը մոռացված՝ գալիս է միւսը: Գեռ մեր լիշողութեան մէջ են Ախալքալաքի գաւառի աւերակները, և ահա Չամախին գալիս է մեզ մոռացնել տալու նրանց: Եթէ կար մեզ համար մի անհերքելի ճշմարտութիւն, դա այն էր, որ մենք

կանգնած ենք հաստատուն հողի վրա: Բայց այժմ այդ ճշմարտութիւնն էլ խախտվում է: Վերջին երեք տարիները ցոյց են տալիս, որ մեր հողն էլ դարձել է անկայուն, խախտ, երերվող: Մտաւոր երերումների, մտաւոր անհազութեան վնասները, աւերակները մենք չէինք տեսնում: Բայց ահա բնութիւնը գալիս է մեզ ցոյց տալու, թէ ինչ դժբախտութիւն է հաստատուն հողից զրկվելը:

Այ՛ս, ահա ելի աղէտ: Նա շշմեցնում է մեզ: Մանր—մունր շահերից ու ձգտումներից կազմված մեր կեանքը շուարած է այդ անակնկալ հարուածի տակ. նա համարեա կանգ է առել, նրա մէջ լայն, արիւնալի մի շերտ մտաւ: Երկնքի տակ մնացած մի ամբողջ ժողովուրդ է դա, բաղկացած տասնեակ հազարաւոր հոգիներից. տների փլատակների մի անհուն դաշտ է դա, որի մէջ թաղված են հազարաւոր մարդիկ: Սա ընդհանուր տեսարան է: Բայց նա ունի մանրամասնութիւններ, որոնք սարսուռ են ազդում:

Եւ ահա ելի, արիւնոտ շերտը ճնշում է մեզ իր անտանելի ծանրութեամբ, նա տանջում է մեզ, խլում է մեր ամբողջ ուշադրութիւնը, որոնել է տալիս մեզ: Ի՞նչ է մեր որոնածը, ի՞նչ ենք ուզում, որ լինի: Ի՞տենք, որ բնութեան դէմ կուեւ չենք կարող. գիտենք, որ պատահարների դէմ մարդը ոչինչ չունի, բացի թող, կախ ընկած գլխից և փխրուն ու անօգնական կրծքից: Բայց և

այնպէս որոնում ենք մի բան, մեզ հարկաւոր է մի լեռնակէտը վայր չընկնելու համար: Մենք մեր սրտի համար միտթարութիւն ենք պահանջում: Ո՞րն է այդ լեռնակէտը, ո՞րն է այդ միտթարութիւնը:

Մի գիտակցութիւն, որ ցոյց տար ձեզ, թէ բնութեան հարուածների տակ միայն մեր խեղճ գլուխը, մեր փխրուն կուրծքը չեն դրված: Մի գիտակցութիւն, թէ մենք այդպիսի հարուածների տակ էլ ունենք մեր սեփական ոյժը, մեր մարդկային կարողութիւնը:

Եւ ահա նայում ենք մեր շուրջը: Սոսկալի աղէտը սրբան աւերակներ է գործել Չամախում, բայց միւսնոյն ժամանակ սրբան գեղեցիկ տեսարան է բաց արել մեր շուրջը: Մենք տեսնում ենք, որ մենք մարդ ենք եղել, տեսնում ենք որ գիտենք սիրել միմեանց, օգնել միմեանց:

Հաւաքվում են մարդիկ, աշխատում են եռանդով, դէս ու դէն վազում, գիմումներ են անում. նիստեր, խորհրդածութիւններ, լայն ծրագիրներ: Կրակոտ գործունէութիւն...

Անսովոր բան չէ մեզանում այդ իրարանցումը, ամեն օր մենք տեսնում ենք նրան և չենք զարմանում: Որովհետեւ գիտենք, որ կեանքը կուր է, որ մարդիկ այդպիսի թափով ու կրակով գործելու միջոցով միայն կարող են իրանց անձնական շահերը պաշտպանել, իրանց բարեկեցութիւնը հաստատել: Բայց այժմ:

Այժմ սովորական, առօրեայ երևույթը չէ: Այժմ չը կայ շահ, այժմ անձնականութեան տեղ մարդկայնութիւնն է հանդէս եկել: Գործում են լանուն մարդկութեան, լանուն եղբայրութեան: Իւրաքանչիւրը պատիւ է համարում ծառայել այդ Սուրբ գործին: Ա՛խ, ինչպէս փոխել, փափկացրել է աղէտը մարդկանց: Նայելով նրանց, կեանքի դառնութիւնը կարելի է մոռանալ: Նայելով այդ կրակոտ գործունէութեան, կարելի է մի բոպէ հաւատալ, որ իզուր են մեր աշխարհը անուանել արտասուքների հովիտ: Լայն բացվել է մարդկային սիրտը, այլևս չեն մերժում նուէրներ տալը, այլևս սակարկութիւն չեն անում: Գժբախտութիւն է—պէտքէ տալ, պէտք է շտապել: Եւ այս պարտաւորութիւնը շատ լաւ հասկանում են ամենքը—կրթվածը և տղէտը, հարուստը և աղքատը:

Քանի մեծ սրտեր, քանի հանճարներ քարոզել են մարդասիրութիւն, եղբայրութիւն: Գեռ որ ժամանակ էր երբ կեանքի օրէնք էր, հրատարակվում՝ «ինչ ուզում ես, որ ուրիշները քեզ անեն, նոյնն էլ դու արա՛ նրանց»:

Եթէ այժմ մարդասիրութեան, եղբայրութեան քարոզիչները դուրս գային իրանց գերեզմաններից, որքան պիտի պայծառանային նրանց նահատակ, տանջված դէմքերը: Նրանք պիտի բացականչէին. «Գտանք, վերջապէս գտանք»: Եւ այդ գտածը այն

պիտի լինէր, ինչ նրանք այնքան որոնում էին իրանց կեանքում և չէին գտնում—սիրտ, մարդկային սիրտ:

Ո՛րքան հրաշալի է այժմ այդ սիրտը: Նայեցէք. երէկ, քանի դեռ երկրաշարժ չը կար, այդ հրաշալի սիրտը կրող մարդը պատրաստ էր կեղեքել հէնց այն մարդուն, որ այսօր աղէտի գոհ է, թաղել է աւերակների տակ իր ընտանիքը, իր ամբողջ կարողութիւնը: Երէկ, քանի չը կար երկրաշարժը, այս խեղճ մարդը ոչինչ ազդեցութիւն չէր թողնի մեզ վրա, իսկ այսօր մեր արտասուքն է գրգռում, և մենք բաց ենք անււմ մեր գիրկը ու ասում «Եղբայր ենք, մարդ ենք երկուսս»:

Ի՛նչը մեր մէջ այսպիսի հրաշք գործեց: —Գժբախտութիւնը, աղէտը: Գժբախտ չը լինէր մարդը, մենք և նա միմեանց դէմ միմիայն սրածատամներ և ծուտտող ճանկեր կունենայինք: Իսկ այսօր, երբ նա մի թշուառ արարած է, մենք նրան պատրաստ ենք պաշտել իբրև մարդու...

Ահա, ընթերցող, կեանքի առեղծուածը, հանելուկը: Մինչև որ չէ գալիս դժբախտութիւնը, մեր սիրտը անզգայ է և կոշտ, նրա մէջ գազանային հակումները պատրաստ են բռնկվել ամեն վայրկեան: Միայն աղէտն է մարդկայնացնում այդ սիրտը, միայն սոսկալի դժբախտութիւնն է մեզ լիշեցնում մեր պարտաւորութիւնները, «մոռացված խօսքեր»:

Բայց մի շտապէք լայն եզրակացութիւններ դուրս բերել այս հանգամանքից. Աղէտներով ու սոսկալի դժբախտութիւններով լի է մեր կեանքը և սակայն ինչո՞ւ մեր սիրտը ամեն օր, ամեն ժամանակ այսպէս չէ, այսքան լաւ, բարի, մարդկային:

Մտածում էք այս հարցի վրա, և ձեր առջև մի ցուրտ իրականութիւն է բացվում: Երբ բնութիւնն է մեզ աղէտ բերողը, մենք այն ժամանակ մի սիրտ, մի հոգի ենք դառնում՝ մարդասիրութիւն ցոյց տալու համար: Բայց երբ աղէտները մեր ձեռքի, մարդկային ձեռքի գործ են, այն ժամանակ սառն ենք և անտարբեր:

Գնանք հէնց նոյն Ըամախին: Այսօր երկրաշարժի գործած աւերակների վրա մի դժբախտ մարդ է նստած, և մենք նրա համար պատրաստ ենք նրա առաջ առնել: Բայց միթէ նոյն Ըամախում երէկ, անցեալ օրը, երկրաշարժից առաջ չը կային նոյնպիսի դժբախտ մարդիկ: Կային, իհարկէ, բայց մենք լուռ ու անտարբեր անցնում էինք նրա մօտով, մինչդեռ եթէ մօտենայինք նրան, խօսեցնէինք, նա կը պատմէր մի այնպիսի աղէտ, որ թէև փոքր չափերով, բայց միևնոյն թշուառութիւնն է կազմում:

Մենք ասում ենք «հաց ու անկողին չունեն երկրաշարժից վնասվածները, շտապենք ուղարկել նրանց հաց, տաք շոր, օգնութիւն»: Եւ շտապում

ենք: Բայց ամեն օր, ամեն ըոպէ մեր շուրջը մարդկանց մի ահագին բազմութիւն տանջվում է, կոտորվում նոյն պակասութիւնից, իսկ մենք ոչ միայն չենք շտապում, այլ և հաւատացած ենք, որ չը պէտքէ շտապել: Մեր ձեռքը մի զոհ է ընկնում խնայել մենք չը գիտենք, և իզուր դժբախտը իր մարդկային լեզուի ամբողջ կարողութիւնը լարում է, որ հասկացնէ մեզ, որ եթէ մենք չը խղճանք, եթէ մի քիչ կամաց չը ճնշենք նրան, նա դժբախտներից դժբախտ կը լինի, նա կը մնայ փողոցում, իսկ նրա ընտանիքը սովից կը մեռնի: Մենք այդ ոչինչ ենք համարում, մենք դժբախտացնում ենք մարդուն, մարդկութեան շրջանից դուրս գցում, թոյլ տալիս, որ նա ապրի իբրև քաղցած շուն: Մի օր մեզ լուր են բերում, թէ այդ իսկ մարդը երկրաշարժի, հրդէհի զոհ է դարձել, և մենք ցնցվում ենք, մենք, համաձայնվում ենք, որ պէտք է նրան օգնել:

Աղէտներ... Քանի—քանի աղէտներ կան մեր շուրջը բոլորված: Քանի տներ կան, որոնք աւերվել են մի-մի երկրաշարժից, այնպիսի երկրաշարժից, որ ստորերկրեայ ոյժերից չէ առաջանում, այլ մարդու զազանային սրտից: Զոհեր—որքան կամենաք. նրանք ամեն տեղ են, նրանք ամբողջ օրը աչքի առջև են ման գալիս մեզ հետ, քսվում են մեզ, իմաց են տալիս, որ անբախտ զոհեր են: Բայց ոչինչ: Մենք անհամբուստութիւն, ցնցում չենք

զգուճ նոյն իսկ այն ժամանակ, երբ մեր ոտը դիպչում է այդպիսի զոհերի դիակներին:

Բազուճ այժմ մեճ գուճարներ են ժողովում երկրաշարժից վնասվածների համար: Բայց նոյն Բազուճ արհեստաւորների, բանւորների մի ահագին բազմութիւն մնացել է առանց գործի, քանդված, քարուքանդ դարձած: Եւ ո՞վ է ձեռքը մեկնում նրանց:—Ոչ ոք:

Պարզ է, ուրեմն, մեզ հարկաւոր են բնութեան աղէտներ, այնպիսի սարսուռ ազդող զէպքեր, երբ պատճառը մենք չենք, երբ մենք չենք զգում որևէ պատասխանատուութիւն: Այդ ժամանակ մենք հրապարակ ենք հանում լայն, մարդասէր և եղբայրասէր սիրտ:

Գեղեցիկ է, այո՛, այդ սիրտը: Ուրախութեան արտասուքներ են գրգռում ուշադրութեան այն սրտաուճ նշանները, որոնք այնպիսի գեղեցիկ առատութեամբ երևան են գալիս ամեն օր և որոնց առարկան դժբախտ, ողբալի Չամախեցիներն են: Մարդու սիրտը լցվում է անհուն հպարտութեամբ, լիշերով որ ինքը մարդ է: Աշխարհը երևում է վարդագոյն, գեղեցիկ, ժպտուն. կարծում ես, թէ մեր երկնքի տակ չես կանգնած, այլ մտել ես մի փառահեղ տաճար, որտեղ ամեն կողմից Սուրբեր և հրեշտակներ են նայում քեզ:

Բայց այդտեղ էլ, այդ տաճարումն էլ, չես կարողանում չը լիշեր, որ դեռ անկատար է, դեռ

կիսատ—պոտ է մարդկութեան սիրտը: Նրան հարկաւոր են ցնցումներ, ահաբեկ հրաբուխներ, այդ ժամանակ նա գեղեցկանում է, փայլում է առաքինութիւններով: Մինչդեռ մեր սովորական կեանքում, մեր մտխրագոյն իրականութեան մէջ, հարիւրաւոր ու հազարաւոր փոքր, բայց նոյնքան դառն ցնցումների, անձայն, բայց նոյնքան աւերիչ հրաբուխների առաջ նա սառն է, անզուժ գազանային:

Եւ ինչ: Միթէ մարդկային սրտի այս տօնը լաճախ տեսած լինելու համար հարկաւոր է ցանկալ, որ բնութեան աղէտները շուտ շուտ կրկնվեն:

Ո՛չ բնութեցող, ես այդպիսի բան չեմ համարձակվիլ մտքովս անգամ անցկացնել: Ինձ համար հազարապատիկ լաւ կ'լիներ, եթէ Չամախին անվնաս և կանգուն մնար մեր կեղեքիչ իրականութեան մէջ քան աւերակների կոյտ դառնալով հանդէս բերեր մարդկային սրտի մեծագործութիւնը...

Երէկ փետրուարի 7-ին, Չամախուց մեր սեփական թղթակցից ստացանք հետևեալ հեռագիրը: «Այսօր առաւօտեան ժամի 6-ին զգացվեց երկու հարուած: Ժողովուրդը սարսափած շարունակում է փախչել: Պաշտօնական տեղեկութիւններին նայելով առայժմ հանված են փլատակների տակից 750 դիակներ, ժողովրդի ասելով՝ մեռածների թիւը երկու անգամ աւելի է: Միջոցներ են

ձեռք առնվում ցրտի և քաղցի դէմ: Բագուցիները եռանդով օգնում են: Լեռնային զիւղերի բնակիչների դրուժիւնը բոլորովին նման է Զամախեցիների դրուժեանը: Այս րոպէին եկան Բագուից կոմիտեի անդամները: Սարգիսըէգեան: Այս հեռագրից յետոյ հանվեցին նա և 40 դիակ:

«Касиш» լրագրում կարդում ենք հետևեալ մանրամասնութիւնները Զամախու երկրաշարժի մասին. «Ով գոնէ մի անգամ տեսել է Զամախին, նա այժմ կարող է զարհուրել այն աւերմունքից, որ գործել է այս թշուառ քաղաքում յունվարի 31-ի երկրաշարժը: Բաղաքի թուրքական ընդարձակ մասը, իր երկար շուկայով այժմ այլևս չը կայ: Մի քանի հազար տներ, այգիների, շատրուանների, մեծ քարվանսարայի, խանութների շարքերի, մղկեթների, մահմեդականների ուսումնարանների և բաղանիքների հետ միասին, փոխարինվել են քարակոյտերի մի ահագին բլրով, որի միջից տեղ—տեղ ցրված երևում են գերանների և տախտակների կտորները, կամ տեսնվում են ժայռերի փոշոտած կատարներ: Փողոցներում,—եթէ միայն այդ անունը կարել է տալ քարերով և զանազան կտորտանքներով ծածկված նեղ տարածութիւններին, տեղաւորված մարդիկ գործում են ոչ Անդրկովկասեան ամենահին քաղաքներից, մէկի բնակիչների տպաւորութիւն, այլ օտար տեղերից եկած պանդուխտների, որոնք չար բախտի հալածված գէպի աւերակների այս աշխարհը,

չը գիտեն, թէ ինչ անեն լուռ և անհետնկալ նոր հայրենիքում: Վայրենու նման նայելով իրանց չորս կողմը, այս թշուառները դեռևս չեն կարողանում ուշքի գան, և եթէ երբեմնապէս վայրկենաբար ուշքի էլ են գալիս ու աշխատում լիշել որևէ բան իրանց գլխով անցածից, այդ գիտակցութիւնը աւելի ևս ծանր կերպով է ներգործում նրանց առանց այն էլ զրգուված հոգեկան գրութեան վրա: Կշու խոնարհութեամբ նայելով հայրենի քաղաքի աւերակների վրա, որ այնքան բազմաթիւ գոհեր է խլել իր հարազատ որդիներից, տանջանքների և սարսափի անջնջելի զգացմունքներով լցված այդ արարածները անկարող են գնահատել ոչ միայն այն, որ իրանք կենդանի են մնացել այլ և չեն գիտակցում, որ այժմ կան և տպրում են: Նրանք այժմ չեն տպրում և նրանց ճակատագրական անտրտունջ հայացքները և բթացած զգացմունքները բոլորովին համապատասխանում են նրանց տների աւերակների վրա թագաւորող գերեզմանական խորհրդաւորութեանը:

Ի հարկէ, հարց ու փորձ անել մարդկանց, որոնք այսպիսի զարհուրելի դրութեան մէջ են գտնվում, որևէ բանի մասին անհնար է, որովհետև տանջանքների մրուտը քամած այս թշուառականները պէտքական են, այն էլ ոչ բոլորը բժշկութեան համար միայն, որպէս ծանր հիւանդներ: Ահա թէ ինչու անհրաժեշտ է շուտափոյթ անմիջական բժշկական օգնութիւն հասցնել, առանց որի կենդանի

մնացածները կարող են զոհ գնալ նրանց տիրած սարսափին և ընդհանրապէս հոգեկան զօրեղ հուզմունքներին:

Ականատեսների ասելով, քաղաքի թուրքական մասում, բառի բուն նշանակութեամբ, գետնի հետ են հաւասարվել մօտ 4000 տուն: Ուրեմն որքան բնակիչներ գրկվել են իրանց վերջին գալքից և դարձել են լեռին աղքատներ: Եւ որքան հոգի գտել են իրանց գերեզմանը աւերակների տակ: Այժմ ճիշտ թւեր չը կան. վերադարձողներից մէկը հաղորդեց մեզ, որ մինչև փետրվարի 8-ը, թուրքական գերեզմանական սլահպանի հաշուով, թաղւած են 486 դիակներ: Ինչպէս և առաջ ասում էին, առանձնապէս շատ են կոտորվել կանայք և երեխաներ: Ինչպէս ենթադրում են, բազմաթիւ թշուառներ մնացել են 11 բաղանիքների աւերակների տակ, որոնցից մէկը, ամենամեծը, որ գետեղում է իր մէջ 300 մարդուց աւելի, ինչպէս ասում են, լիքն էր այդ օրը: Բաղանիքներում փորուածներ անել պէտք է սկսեն սապեօրների գալուց լեռու: Առ այժմ աշխատում են Չամախու գնդի զինւորները: Բացի բաղանիքներից, այդ գոթախտ օրը քաղաքի երկու նշանաւոր մահմեդականների տներում կատարվում էին քիչ առաջ մեռած ննջեցեալների սգահանդեսներ, ուր սովորաբար լինում են բազմաթիւ կանայք և երեխաներ: Հէնց այդ աներում, ինչպէս ենթադրում են

մնացել են աւերակների տակ մօտ 100 և գուցէ աւելի կանայք և երեխաներ: Եօթ աւերված մգկիթներն ևս դեռ չեն սկսել փորել, չնայելով, որ նրանց աւերակների տակ էլ քիչ մարդիկ չեն մնացել, որովհետեւ երկրաշարժը պատահեց կէսօրին նամազի ժամանակ, որ մահմեդականները, մանաւանդ իրենց տներից հեռու ապրող մահմեդականները, գերադասում են կատարել մգկիթներում: Մի ուրիշ թղթակից գրում է:

«Յունվարի 31-ին, ցերեկվայ 1 ժամին, սկսվեց մի սարսափելի, չըտեսնված երկրաշարժ, որ շարունակվում էր ամբողջ կէս ժամ: Բացվեց մի սարսափելի տեսարան: Այնպիսի փոշի բարձրացաւ որ օրը մթնեց և դէս ու դէն ընկնող մարդիկը, շփոթւած, գլուխը կորցրած, չէին կարողանում ճանաչել միմեանց: Ընդհանուր խառնաշփոթութեան մէջ ամեն մէկը աշխատում էր ազատել իրան և իրեններին, բայց երկիւղից և շուտահատութիւնից խելակորույս եղած, հաշիւ չէին տալիս իրանց, թէ ինչ են անում: Ռա մի սարսափելի, դարերական թշուառութիւն էր: Մարդիկ փախչում էին ամեն ուղղութեամբ, աղաղակում էին և օգնութիւն էին կանչում, կենդանիները ոռնում էին, թռչունները դիպչում էին ցանկերին և պարիսպներին, իսկ այդ ժամանակ տները խանութները և մգկիթները խորտակվում էին, քանդվում էին թնդիւններով, հարիւրաւոր մարդիկ կենդանի

Թաղելով իրանց տակը: Երեկոցեան մօտ, երբ խառնաշփոթութիւնը մի փոքր դադարեց, իւրաքանչիւրը սկսեց որոնել իւր մերձաւորներին մանուկներին, կանանց, եղբայրներին, քույրերին քաղաք վերադարձան նրանք, որոնք ազատվել էին փախչելով շրջակաները: Ճանջանքների պատկերը աննկարագրելի է. ամբողջ քաղաքում բարձրացան հեծեծանքի, օգնութեան կանչող ձայներ: Ազգականների, բարեկամների բացականչութիւնների մի ընդհանուր վայնասուն. փլված տների տակից հրաշքով ազատված մանուկները, հեծկլտալով և լալով, անգիտակցաբար հարցնում էին անցորդներին իրանց ծնողների մասին:

Մի խօսքով, մարդ խօսք չէ գտնում նկարագրելու տանջանքների այն պատկերները, որոնցից մարդու սիրտը կտոր — կտոր է լինում...

Բաղանիքների փլատակների տակ սպանված մանուկների և կանանց թիւը դեռ ևս յայտնի չէ. բայց մարդկային զոհեր խիստ շատ են: Կան տներ, որոնց աւերակներից հանված են մինչև վեց դիակներ, ընդհանրապէս կարծում են, որ քաղաքի մահմեղական մասում տուն չը կայ, որ սպանված չըլինէին երկու — երեք մարդ. բոլոր հին լիշատակարանները և ամրաշէն տները, չը խօսելով արդէն մանրերի մասին, խորտակված են: Հռչակաւոր գլխաւոր մզկիթը, որ ութ հարիւր տարուց աւելի գոյութիւն ունէր, և հին ճարտարապե-

տութեան հագուազիւտ լիշատակարաններից մէկն էր, հիմնալատակ է եղած. քանդվեցին նոյնպէս ուրիշ մզկիթներ և եկեղեցիներ ևս: Քանդված է ամբողջ բազարը, նրա մի մասը խորտակման ժամանակ սկսված հրդեհի բաժին է դարձել:

Բնակիչները սարսափելի թշուառ դրութեան մէջ ընկան. ոչ ոք ոչ հաց ունի, ոչ ջուր, ոչ փայտ, ոչ էլ լուսաւորութիւն. գիշերները քաղաքը ընկզմվում է մի անթափանցելի խաւարի մէջ, որը հառաչանքների և հեծկլտանքների հետ սարսափելի տպաւորութիւն է գործում: Յուրտը ևս, իր կողմից, սաստկացնում է ընդհանուր թշուառութիւնը: Առանց չափազանցելու կարելի է ասել որ ոչ մի Չամախեցի այժմ ապաստան չունի և բոլոր բնակիչները անց են կացնում ցերեկները և գիշերները բաց երկնքի տակ, մեծ մասամբ, համարեա մերկ: Եթէ դրսից շուտով օգնութիւն չը հասնի, բոլոր բնակիչները կ'կորչեն: Յերեկները քաղաքում շրջում են երեսաների և կանանց ամբողջ խմբեր, ցնցտներով և վշտահար, հաց մուրալով հարուստները և աղքատները միևնոյն դրութեան մէջ են գտնվում և ոչ մէկի մօտ չը մնացին միջոցներ ոչ միայն ուրիշներին օգնելու, այլ և իրանց կերակրելու համար:

Երկրաշարժի ակնատեսս պ. Պօպով — լեռեալն է գրում: Մինչև ամենասարսափելի հարուածը, որ քարուքանդ արեց ամբողջ քաղաքը նկատելի եղան երկու թոյլ հարուածներ —

մէկը առաւօտեան ժամի 8-ին մօտ, միւսը 11-ին: Երևի դրանք այն փոթորկի համբաւարներն էին, որ գալիս էր չարարատ ամբօխի վրա այդ օրը: Ժամի 12-ին ես գնացի իմ ընկեր ժամգործի մօտ: որի խանութը գտնվում էր ներքին բազարում: Յանկարծ 12 ժ. 50 րոպէին լավեց ստորերկրեայ թնդիւն և մենք, հասկանալով թէ բանը ինչու՞մն է, հազիւ դուրս վազեցինք փողոց, երբ մեր ետևում փուլ եկաւ խանութի պատը: Գետնի իրերումները այն աստիճան սաստիկ էին, որ անկարելի էր, ոտքի վրա կանգնած մնալ. ես մի քանի անգամ վալը ընկալ և միայն իմ ընկերի շնորհիւն էր, որ ինձ կօխ չըտուեց մեր յետևից եկող ամբօխը: Լացը, մարդկանց աղաղակները, քանդվող տներեց բաղկացած աղմուկը, որոնցից բարձրացել էր այնպիսի սարսափելի փոշի, որ անկարելի էր աչք բաց անել—այս բոլորը խառնվում էր մի աներևակայելի քաօսի մէջ: Կանաչք և երեխաները, որ կարողացել էին ժամանակին դուրս փախչել տներից, շնորհակալութիւն էին յայտնում Աստուծուն իրանց փրկութեան համար, մոռանալով իրանց ազգականներին: որոնց վիճակը նրանց դեռ յայտնի չէր: Մենք շարունակում էինք վազել բազարի լայն փողոցով և մեր աչքերին ներկայանում էին մէկը միւսին սոսկալի տեսարաններ մի քանի տկոթ կանաչք դուրս վազեցին բաղնիսից, որի վրատակների տակ նրանք թողել էին մօտ 150 հոգի

իրանց ընկերուհիներեց, հայոց եկեղեցուց, որ այդ ժամին պաղարագ կար, դուրս վազեց զգեստաւորված քահանան, իսկ նրա ետևից ամբողջ ժողովուրդը, մէկը միւսի գլխով թուչելով, թողնելով ննջեցեալին եկեղեցում: Եւ մի շարք ուրիշ տեսարաններ, որոնց լիշելուց անգամ բիզ—բիզ են կանգնում գլխիս մագերը: Մի րոպէից աւել շարունակվեց առաջին աւերիչ հարուածը, նրան անդադար հետևում էին աւելի թեթեւ հարուածներ: Ես շտապում էի քաղաքի վերին մասը, ուր սպրում էի իմ մօր հետ, և կարող էք երևակայել որքան ուրախացայ, տեսնելով նրան ողջ և առողջ: Մայրս պատմեց, որ ցնցումի ժամանակ ինքը սենեակումն էր և ուզեց դուրս վազել, բայց դուռը բաց անել անհնարին էր և եթէ չը լինէր այնտեղ մեր մի ազգականը, մօրս դրութիւնը վատ կ'լինէր: Պէտքէ ասել, որ բնակիչները մեծ մասը այս իսկ պատճառով չը կարողացաւ տներեց դուրս փախչել:

Գետնի իրերումները շարունակվում էին ամբողջ գիշերը և միւս օրը, մինչև իմ հեռանալը: Երկու գիշեր ես ստիպուած էի մնալ բակում, բաց երկնքի տակ, և խոստովանում եմ, ամենափոքր ցուրտ անգամ չէի զգում, մի բան, որ զարմանալի չէ, եթէ նկատի առնենք այն յուզմունքները, որ պատում էր և ամենքին գետնի ամեն մի իրերման ժամին: Երկու օրից յետոյ ես

Հեռացայ Չամախուց, թողնելով աւերակների տակ իմ ամբողջ ունեցած չունեցածը:

Յնցող տպաւորութիւն են թողնում քանդված մզկիթներն ու տաճարները: Ջուճա—մէջետը Աիր-վանի այդ չարէն ու պարծանքը, փլվել է յարաւարեւելեալ կողմից: Գարաւոր պատերը, որոնք միայն անցեալ դարում երեք սաստիկ երկրաշարժ են տեսել, չը դիմացան: Այդ ամենահաստ և պինդ պատերի խորտակումը պարզ ցոյց է տալիս, թէ որքան ուժեղ էր երկրաշարժը: Նրա մօտ գտնվող մահմեդական դպրոցը փլվել է. այստեղ թաղվել են ուսուցիչ Ալասով և աշակերտները: Աղէտը պատահեց դասամիջոցին: Ենթադրում են, որ մզկիթի փլուածքների տակ դեռ կան երեսաների դիակներ. քարերի տակից դիակների սաստիկ հոտ է գալիս: Բայց այստեղ պեղումներ կատարելը միանգամայն աննկարելի էր, որովհետև մզկիթի պատերը թափվել են ահագին բեկորներով, որոնց մօտենալն անգամ վտանգաւոր է: Պակաս սարսափելի պատկեր չէ ներկայացնում ուսաց եկեղեցին: Այստեղ փլվել է գմբէթը, իսկ քարէ կամարները եկեղեցու մէջ մի ամբողջ քարակոյտ են կազմում: Պատերը առ այժմ ամուր են կանգնած, բայց ճեղքուածներ ունեն: Անասվել են պատկերներից մի քանիսը, որոնցից մօտ 10 հատ նկարիչ

բրիւլովի գործերն են և նուիրված են Նիկոլայ I Կայսրի կողմից: Ռուսաց եկեղեցուց մի քիչ ցած գտնվող հայոց եկեղեցին արտաքուստ, գոնէ հեռուից, անվնաս է երևում: Գմբէթները չեն էլ ծովել: Միայն գոները և պատուհանների վանդակներն են ծոված: Ներսից եկեղեցին բոլորովին քարուքանդ է եղել: Երկրաշարժի ընդմէջ հայոց եկեղեցում մի պատուաւոր քաղաքացու թաղման պատարագն էր կատարվում. հաւաքվել էր մեծ բազմութեամբ ժողովուրդ, ինչպէս ասում են, մօտ 300 հոգի: Առաջին ցնցումի ժամանակ բոլոր աղոթողները կատաղաբար փողոց դուրս վազել, փոքրիկ վնասներ ստանալով թափվող ծեփից: Այսպիսով հայերի մեծ բազմութիւն, շնորհիւ թաղման հանդիսի, չ'թաղվեց տների և խանութների մէջ: Եկեղեցում վառված ճրագներից հրդէհ գոչացաւ, բայց շուտով դատարեց, վերելից թափվող ծեփի կտորները հանգցրին նրան:

Բազուկից եկած բժիշկները և գթութեան քոյրերը, թւով 12 հոգի, ապրում են գինւորագրական ատեանի շինութեան մէջ: Այստեղ էլ գթութեան քոյրերի սենեակում, պառկած է մի հիվանդ հայ կին իր երեսալի հետ: Նրան դուրս էին քաշել փլատակների տակից և նա երեսալ է ծնել գթութեան քոյրերի մօտ: Նրան շատ լաւ են խնամում և նա լաւանում է: Հայոց դպրոցում ցնցումների սկզբում աշակերտները դուրս վազեցին

փողոց. ուսուցիչը սկսեց համրել և տեսաւ, որ
 չ'կան երկու հոգի ամենափոքրիկներէց: Երկու երեք
 ժամից լետոյ սկսեցին եռանդուն կերպով պեղել
 փլուածքը և դտան նստարանի տակ երկու փոք-
 րիկներին որոնք նստած էին այնտեղ կուչ եկած:
 Այդ նստարանի լետեում փոքրիկները նստած
 պարապում էին, և երբ պատերը սկսեցին թափւել,
 նրանք մտան նստարանի տակ. նստարանը թաղվեց
 քարերի և հողի տակ, բայց ազատեց փոկրիկներին:
 Աշակերտների, ուսուցչի և ծնողների ուրախու-
 թիւնը անվերջ էր: Փլատակների մէջ թաղված
 իւրաքանչիւր տղամարդին դուրս հանելու համար
 ազգականները տալիս էին փորողներին 20—25
 ռուբլի, նոյն իսկ, եթէ թաղվածը 2—3 տարեկան
 երեխայ էր. իսկ կանանց դուրս հանելու համար
 տալիս էին 1—2 ռուբլի, վերջին օրերում նոյն
 իսկ դրանից էլ քիչ: Անկասկած, այդ պատճառով
 էլ առաջին օրերում աւելի շատ տղամարդկանց
 ազատեցին, քան կանանց:

Չ Է ՈՒՍՈՒՄՆ ԸՍԻՐՎ ԸԾ

Ինչպէս նկատած կ'լինեն մեր ընթերցողները
 վերջին երեք—չորս տարիները ստէպ ստէպ կրկն-
 վում են երկրաշարժի ցնցումները Անդրկովկասի
 և նրան կից երկրներում: Ոչ ոք դեռ չի մոռացել
 այն երկրաշարժները, որոնք տեղի ունեցան Ախալ-

քալաքի և հարևան գաւառներում, Կարսի շրջա-
 կայքում և փոքր Ասիայի շատ տեղերում, որոնք
 ոչ միայն վնասներ տւին տներին և ուրիշ շինու-
 թիւններին, այլ և զսհեր տարան թէ տնային
 կենդանիներից և թէ նոյն իսկ մարդկանցից:

Երկրաշարժի առիթով գրած յօդուածներից
 մէկի մէջ մենք ցոյց էինք տուել, որ կովկասեան
 երկրաշարժների մասին մեր ունեցած վիճակա-
 գրական և գիտնական տեղեկութիւնները շատ
 թերի են և կցկտուր: Չը նայելով այն հանգա-
 մանքին, որ մենք գտնվում ենք երկրազնդի այն
 գօտիներից մէկում, որտեղ յաճախ պատահում են
 երկրաշարժներ, մենք մինչև այժմ ճիշտ դիտո-
 դութիւններ չունենք արած մեր երկրաշարժների
 վերաբերմամբ: Չատ հասկանալի է, որ ինքն ըստ
 ինքեան հանդէս է գալիս մեր երկրաշարժների
 ուսումնասիրութեան խնդիրը: Կա կարևոր մի
 խնդիր է, որ ունի ոչ միայն գիտնական, այլ և
 գործնական նշանակութիւն մեր կենցաղավարու-
 թեան մէջ:

ԵՐԿՐԱՇԱՐՉԻ ԾԱԽԱԼԸ

Երեկ մենք հաղորդեցինք սկզբանական այն
 լուրերը, որ ստացել էինք երկրաշարժի մասին:
 Մենք զգուշացանք մեզ հասած բոլոր տեղեկու-
 թիւնները առաջ բերելուց, ցանկանալով նրան

ստուգել: Այժմ թէ պաշտօնական և թէ մասնա-
ւոր հաղորդագրութիւնները ցոյց են տալիս, որ
երկրաշարժը շատ տեղերում զգացվել է շատ
խիստ կերպով և առաջացրել է սարսափելի աւե-
րումներ:

Երկրաշարժի ցնցումները զգացվել են Կաս-
պից ծովից սկսած մինչև թիւրքայի սահմանները:
Մեզ համար դեռ դժվար է ճիշտ կերպով պարզել,
թէ որտեղ է գտնվում հարուածների ամենակեն-
դրօնական մասը և թէ արդեօք դէպի հարաւ նա
մինչև ռոտեղ է հասել: Մեր տեղեկութիւնները
ցոյց են տալիս, որ ամենից շատ և սարսափելի
կերպով վնասվել է Չամախին իր շրջակայքով:
Բայց դեռ պարզ չէ մեզ համար, թէ արդեօք
ներկա, երկրաշարժը պատկանում է Չամախու-
երկրաշարժների կարգին, թէ արձագանք է մի
ուրիշ երկրաշարժային ցնցման, որ կենտրոնը
գտնվում է ոչ Չամախու կողմերում:

ՕԳՆՈՒԹԵԱՆ ԿԱՐՕՏՆԵՐ

Մենք «Մշակի» մէջ հաղորդեցինք բոլոր այն
տեղեկութիւնները, որոնք մինչև այժմ լայտնի են
երկրաշարժի և Շամախու աղէտի մասին: Երկրա-
շարժը զգացվել է շատ ընդարձակ տարածութեան
վրա, իսկ ամենից շատ վնասվել է Չամախին իւր
շրջակայքով:

Չամախին կործանվել է բոլորովին: Տների
շատ քիչ մասն է մնացել անվնաս: Ամուր շինու-
թիւնները և հաստ պարիսպները խորտակվել են,
փլատակների տակ մնացել են մարդկային զոհեր
և բնակիչների ամբողջ գոյքը: Չնորհիւ այն բանի
որ երկրաշարժը տեղի էր ունեցել ցերեկը, մար-
դիկ կարողացան դուրս վազել և ազատվել անխու-
սափելի և սարսափելի մահից:

Անտուն և անպաշար մնացած բնակիչները սար-
սափելի կարօտութեան մէջ են: Եղանակը դեռ
ցուրտ է, իսկ պատսպարվելու տեղ չըկայ: Մանա-
ւանդ շատ դժվար կ'լինի բնակիչների ժամանակը,
երբ պատսպարանի անհրաժեշտութիւնը կը զգաց-
ուի խիստ կերպով:

ՀԱՒԱՔԱԿԱՆ ՈՅԺՈՎ

Այն անձինք, որոնք ականատես են եղել
Շամախու աղէտին, չեն կարողանում առանց խո-
րապէս լուզվելու պատմել այն սարսափելի տեսա-
րանների մասին, որ բացվում են ամեն օր, ամեն
մի քայլում, հիմնահատակ եղած չարաբախ
քաղաքում: Բողոքներ և զինուորներ և կողմնակի
բանասրներ ամբողջ օրեր պեղում են փլատակները
դուրս հանելու այնտեղ թաղված դիակները: Եր-
կրաշարժը տեղի ունեցաւ այն միջոցին, երբ
մարդիկ հանգիստ ու հանդարտ, առանց որևէ

կասկածի ու երկիւղի, անց էին կացնում իրանց օրը: Տղամարդկանց մեծ մասը դրսումն էր իսկ կանանց և երեխաների մեծ մասը իրանց տներում: Այդ է պատճառը, որ զոհերի թուում ամենից շատ մենք տեսնում ենք և կանանց և երեխաների:

ՎՆԱՍՎԱԾ ԳԻՒՂԵՐԸ

Այն տեղեկութիւնները, որ ստանում ենք Ջամախու երկրաշարժի շրջանից, ցոյց են տալիս, որ նպաստամատուց մասնաժողովների գործէունէութիւնը պէտք է աւելի լայն ծաւալ ստանալ, քան մինչև այժմ եղել է:

Շատ գիւղեր բոլորովին քանդվել են և վրատակների տակ կորցրել են իրանց ամբողջ գոյքը: Մեր թղթակիցը զբաղված է տեղեկութիւններ ժողովելով գիւղերի մասին:

Գիւղերի մասին մի քանի տեղեկութիւններ ժողովել է Արսէն վարդապետ Արտճեան, որ գնացել էր Ջամախից այցելելու երկրաշարժից վնասված տեղերը: Նա Ջամախուց եկել է Թիֆլիս երկու օրով, նորից պէտք է վերադառնայ Շամախի և այնտեղ մնալ մի քանի շաբաթ՝ մասնակցելու նպաստամատուց մասնաժողովի գործերին: Նա ընտրված է Բագուի գլխաւոր մասնաժողովի կողմից իբրև երկրաշարժից վնասված հայ գիւղա-

կան ազգաբնակութեան ներկայացուցիչ: Մենք առիթ ունեցանք խօսելու նրա հետ երկրաշարժից վնասված տեղերի կարիքների մասին և ստանալ լրացուցիչ տեղեկութիւններ:

Այցելած գիւղերը հետևեալներն են: Մադրասա, Քերքենջ, Մէլսարի, Միրիշէն, Աղարէգլու և Խնըսլի հայ և թուրք գիւղերը: Այդ գիւղերում մարդ չէ վնասվել, բայց քանդվել է տների մեծ մասը և փլատակների տակ մնացել են ուտելիքէնի պաշարները, այնպէս որ մեծ կարիք է զգացվում ալիւրի:

Քերքենջ հայ գիւղում վնասվել են բոլոր 230 տները և եկեղեցին: Մադրասա հայ գիւղում 680 տներից բոլորովին քանդվել են 75 տուն, վնասվել է մնացածների կէսը և դարձել տնքնակ, միւս կէսը թէթև նորոգութեամբ կարող է վերականգնվել. քանդվել է նաև ուսումնարանը: Մէլսարի հայ գիւղում քանդվել են բոլոր 80 տները, նորաշէն եկեղեցին ստացել է մեծ ճեխքուածներ: Միրիշէնում, ուր կային 18 հայ և 16 թուրք տներ, վնասվել են բոլորը, բայց մի քանիսը կարող են հեշտութեամբ նորոգել: Սաղիանի վանքը մնացել է անփնաս, իսկ տների այն կէսը, որ գտնվում է փուխր հողի վրա, քանդվել է, դպրոցի շինութիւնը նոյնպէս քանդվել է: Վերին խընսլի թուրք գիւղում վնասվել են գիւղի բոլոր 34 տները, մնացել է կանգուն միայն մզ-

կիթը: Աղաբէգլու թուրք գիւղում վնասվել են բոլոր 8 տները:

Ա Ղ Է Տ Ի Ծ Ր Ջ Ա Ն Ի Ց

(նամակ Չամախուց)

փետրվարի 7-ին:

Անցեալ շաբաթ այստեղ պատահած աղէտալի երկրաշարժից կիսաւեր են դարձել հայաբնակ հետեւեալ գիւղերը, որոնց ցանկի հետ հայտնում են նա և նրանց ծուխերի հաշիւը: Կրանք են. -- Ջարգեարան 169 ծուխ, Հնդար 126, Սաղիան 151, Բահիան 63, Քեարքանջ 200, Գեարա-Քեարքանջ և Խանիշէն 100, Արփուղ 30, Մէլսարի 80, Չարխու 21 և Քեաւանդի 190 ծուխ: Վերջինի մասին պատմում են, թէ այնտեղ միայն մի քանի տուն է կանգուն մնացել:

Հոգևոր իշխանութեան ժողոված տեղեկութիւններից երևում է, որ այս գիւղերից Չամախու գաւառին պատկանողների մէջ բարեբախտաբար մարդկային զոհի միայն մի տէպք է տեղի ունեցել: Քեարքանդ գիւղի մասին պատմվում էր, թէ իբր այնտեղ մի հարսանիքում տան փլատակների տակ մնացել են շատ մարդիկ (մօտ 30 հոգի): Այժմ պարզվեց, որ դէպքը տեղի է ունեցել Բահիան

գիւղում և զոհերը մօտ 15 հոգի էին:

Գ Ի Ի Ղ Ա Կ Ա Ն Տ Ն Ե Ր Ը

Երկրաշարժը նորից հանդես բերեց գիւղական տներ շինելու հարցը: Երբ երկու տարի առաջ Ախալքալաքի գաւառում երկրաշարժից կործանվեցին բազմաթիւ գիւղերի տները, հոգածութեան և խորհրդազոյութեան առարկայ դարձաւ ապագայ տների հարցը: Քննութիւնից երևաց, որ երկրաշարժից ցնցումները դարձել էին աղէտաբեր գլխաւորապէս շինութիւնների անյորմարութեան և պակասութիւնների պատճառով: Ամուր, կանոնաւոր կերպով կառուցած տները մնացել էին անվնաս, կամ չառ քիչ էին վնասվել: Նոյն համայնքը պարզվեց և այժմ, Չամախու երկրաշարժի ժամանակ:

Շամախում չի մնացել ոչ մի տուն, որ վնասված չըլինէր: Համարեա բոլորն էլ քանդվեցին հիմնովին, ուսաց եկեղեցին, գանձարանը, զօրանոցները և բանտը սաստիկ վնասված են: Բոլոր բնակիչները փողոցներում են մնացել, Երկրի տատանումը շարունակվում է համարեա անընդհատ. այս համայնքը խանգարում է պեղումներ անելուն: Այսօր փլուածքների տակից հանված է 200 գիւ-

կից աւելի: Ենթադրւում է, որ աւերակների տակ կան դեռ ևս մի քանի հարիւր դիակներ: Մեծամասնութիւնը կանայք են, որոնք հարուածի ժամանակ գտնվում էին քաղաքի դասնից աւելի բաղանիքներում: Գլխաւոր մզկիթը, որ գոյութիւն ունի 800 տարուց աւելի, այժմ կործանված է, նրա կից գտնվող մահմեդականների ուսումնարանում, փրկած քների տակ մնացին 12 աշակերտներ և մի ուսուցիչ: Ռուսաց ուսումնարանների աշակերտներն անփնաս են: Բանդի կալանաւորներն — 250 մարդուց աւելի — տեղաւորված են գաւթում: Անհրաժեշտ է արտակարգ, ամենայն չափերով նիւթական օգնութիւն հասցնել 6000-ից աւելի մարդ կերակրելու համար:

Ինչպէս հայտնի է՝ Չամախին շատ անգամ է ենթարկվել երկրաշարժների: Ամենահին տեղեկութիւնը, որ ունենք, վերաբերում է 1668 թւին ինչպէս վկայում է այդ մասին Զաքարեա Ագուլեցու պատմութիւնը: Այնտեղ ասված է հետեւելու «թւին Ռ ձ Թ է (1668) յունվարի դ (ն) ումն՝ Ագուլիս կամաց շարշ եկան: Այս շարշն էլ յունվարի դ-ումն Չամախի քաղաքն հէնց եկաւ, որ մինչև Զ է Ռ (6000-7000) հողի մեռաւ. շատ սարայ, Բերթու պարիսպ փլաւ՝ վասն մեղաց մերոց»: Այնուհետև երկրաշարժներ եղել են Չամախում 1806, 1828, 1848, 1859, 1869 և 1872 թւականներին, իսկ թեթև տատանումներ տեղի են

ունեցել համարեա ամենայն տարի: Ներկայ երկրաշարժը պատկանում է խոշոր երկրաշարժի կարգին:

Քանզված բաղնիսներից, որոնց թիւն է 12, կարողացել են պեղումներ անել միայն եօթի մէջ: Մահմուդ-Աղայի մեծ բաղնիսում գտնվել են կանանց 8 դեակներ, բայց, ինչպէս ասում են տեղացիները, այդ տեղ երկրաշարժի րօպէին եղել են 30—40 կանայք: Բաղնիսի խորքում, ուր առատաղը ունի կամարների ձև գտնված է մի կենդանի կին: Այս բանը պատահեց փետրվարի 5-ին, ցերեկվայ 12 ժամին, երբ քաղաքում տարածվեց երջանիկ լուր, թէ գտնվել է կենդանի էակ: Այդ կնոջ անունն է Թաջիմ, Իւզիբէկի կինը: Նրա դուխը ջարդված է և սկանջը պոկվել է: Նրա ծանօթ Ֆաթման ճանաչեց նրան և ծածկեց իւր չադրայով: Միւս բաղնիսում գրտնըվեց մի ուրիշ կենդանի կին, Ֆաթմա-Խանում անունով: Նրան ուշքի բերին և նա սկսեց պատմել իւր տեսածը: Բաղնիսում 30-ից աւել կանայք կային, յանկարծ մթնեց, պատերից թափվեց ծեփը և այդ ժամանակ ամենքը հասկացան, որ երկրաշարժ է և մնացին յատակի վերայ, սենեակի մէջ տեղը, նրանք երկար ժամանակ արթուն մնացին և չետոյ քուն մտան: Երբ Ֆատման զարթնեց, սաստիկ ծարաւ էր: Զուր չրկար, ջուրը դուրս էր թափուել: Ֆատման վերկացրեց միւսներին ամենքը խմել էին

ուղում: Յետոյ նա տեսնում է (սա անկասկած հալիւցենացիա էր), որ ներս է մտնում մի մարդ և տալիս է նրանց ցուրտ ջուր և հրաշալի խնձորներ: Իրանից յետոյ նա ոչինչ չէ փշուրմ: Բայց Փատմալի պատմութիւնն էլ չըջարունակվեց, տասը քօպէից յետոյ նա մեռաւ:

Մինչև այժմ իշխանութիւնները փլատակներից հանել և թաղել են դիւաւորապէս կանանց և երեխաների դիակներ: Պեղումները բազարում, քարվանսարայներում մինչ և հէնց վերջին ժամանակները անհնարին էին, որովհետև այստեղ այլովում էին մանուփակտուրային խանութներ, մեծ քանակութեամբ ճոթեր ծխում էին մինչև օրս, երբ ձիւն եկաւ և անձրև էր մաղում ամբողջ օրը, իսկ երեկոյեան պատեց սաստիկ մառախուղ: Այստեղ հրդեհի ժամանակ, ինչպէս պատմում են, մէկ վաճառական մինչև մէջքը թաղվելէր և նա քոցերի մէջ էր: Նրա աղաղակները և օգնութիւն կանչող աղերսանքները նկարվեցին, բոլորը շտապեցին օգնութեան, բայց ոչ թիւեր, ոչ էլ բրիչներ չըգտնվեցին ձեռքի տակ և ստիպվեցին ձեռքերով ու դանակներով գործել: Նրան կեսայրված դրութեան մէջ, վերջապէս, ազատեցին, բայց նրա ոտները ջարդվել էին: Մէկ ուրիշ վաճառականի Ծատուրովի հետ, աւելի էլ սարսափելի դէպք պատահեց: Առաւօտեան հարուածի վայրկեանին նա նստած էր մազազինում և կարողա-

ցաւ դուրս թռչել փողոցը, բայց լիշերով, որ փողերը թողել է խանութում, իսկոյն լեա գնաց դրամարկղից հանելով 1,500 ռ. հարկերուբիանոցներ, նա վազեց դուրսը, բայց դռներում նրան վրա հասաւ երկրորդ հարուածը. նա ճըխվեց փուշ եկող դռների տակ: Նրան գտան թղթադրամները ձեռքին: Նա թողեց ծերունի հայր ու մայր:

Տիֆի, քութէշի և դիֆտերիտի դէպքեր են եղել, կենդանի մնացածներին ևս դառն վիճակ է սպասում: Նրեկուայ հարուստը այս օր լետին աղքատն է դարձել և ձեռք է մեկնում հաց խնդրելու: Եամախեցիները ամեն ինչ կորցրել են: Ահազին քանակութեամբ կանխիկ դրամ, ոսկէ և արծաթէ իրեր փլատակների տակ մնացել և զոհ են գնացել հրդեհին, մինչև այժմ դեռ քաղաքը տեղ տեղ ծըխում է: Հրդեհին նոյնպէս զոհ է գնացել ահազին քանակութեաբ մանուփակտուրային և գալանտրէյնի ապրանքներ: Վնասը մեծ է: Ականատես և ձեռնհաս մարդկանց ասելով, վնասի չափը կըհասնի 15 միլիօն ռուբլու, բացի այն բազմաթիւ մարդկային զոհերից, որոնց թիւը, մինչև այժմ ստացած տեղեկութիւնների հիման վրա, հասնում է 2178-ի, իսկ փորուածները դեռ շարունակվում են և նոր նոր դիակներ են դուրս հանում: Ականատեսները ասում են, թէ դժբախտութիւնը նկարագրել դժուար է, լրագրներում տպվածը մի հազարերորդ մասը չէ կազմում դժ-

բախտութեան, պէտք է աչքով տեսնել և ըստ այն դադափար կազմել:

Բագուի կօմիտեաը այդ բոլորը ինկատի առնելով՝ որոշեց. խնդրամատոյց լինել իրերի կառավարչապետի առաջ, որ փորուածքների գործը ըստ կարելոյն շտապեցնովի զօրքերի օգնութեամբ, որովհետև Շամախում եղած զօրքերը շատ քիչ են:

Մի խօսքով բաւական մեծ ու գեղեցիկ քաղաքից, աւելի քան քսան և հինգ հազար բնակիչներով, մնացել է լոկ միայն մի անցեալի լիշատակ: Գետնի մէջ նկատուած են ճեղքուածքներ: Ստորերկրեալ հարուածները շարունակվում են, բայց աւելի թույլ կերպով: Եղանակը ցուրտ է և ազգաբնակչութիւնը կուչ է գալիս կապերտներից, գորգերից և զանազան լաթերից սարքված վրաններում կամ տախտակի կտորներից շտապով շինած բարակներում: Իհարկէ շատ անյարմար և նեղուածք նրանց մէջ ապրել, բաց դրանք բախտաւորներ են: Կան այնպեսիները, որոնք ստիպված են մնալ ուղղակի բաց երկնքի տակ: Այժմ թանձր մառախուղ է կանգնած և անձրեւ է մաղում: Մարդկային զոհերի թւի վերաբերմամբ գեռ ևս ճիշտ թւեր չըկան, որովհետև մի փորուածքները շարունակվում են, բայց ասում են, որ վրատակների մեռածների թիւն 1500-ից աւելի կըլինի: Բաղանիքների աւերակները փորելիս երևաց, որ մի քանի մարդիկ կենդանի են մնացել, շնորհիւ

այն բանի, որ նրանց պաշտպանել են բաղանիքների օգանցքները: Նրանցից մի քանիսը շուտով մեռան: Փորուածքների ժամանակ յաճախ պատահում են զարհուրելի տեսարաններ, որոնց նայելիս մարդու աչքերը ակամալ լցվում են արտասոււնքներով: Այսպէս, օրինակ, մի բաղանիքի փրատակները փորելիս գտնվեց մի մեռած մայր, որը մի ձեռքով որդուն բռնած ծիծ էր տալիս, իսկ միւս ձեռքով սանրում էր մազերը: Մի այլ բաղանիքի մէջ փորուածքներ անելիս գտնվեց մի ամբողջ խումբ, բաղկացած մօրից, որ գրկել էր իր չորս երեխաներին. նրանք բոլորն էլ իհարկէ մեռած էին: Յաճախ պատահում են մեռած կանանց խմբեր, որոնք ըստ երևույթին կամենում էին փախչել բաղանիքից և խմբվել են դռան առաջ, որտեղ էլ վրա է հասել նրանց մահը: Նրանց դէմքերը արտայայտում են տանջանք և սարսափ: Պատահում են և երեխաների առանձին — առանձին դիակներ: Վիրաւորվածների թիւը շատ շատ է:

Ե Ր Կ Ր Ա Շ Ա Ր Ժ Ը:

Երկրաշարժի ցնցումները զգացվել են ոչ միայն Անդրկովկասի տրևելեան այլ և նրա հիւսիսային մասում: Ստացված տեղեկութիւններին նայելով կասպից ծովի ամբողջ եզերքում, սկսած

Բալաշարից մինչև Գէրբէնդ նկատվել են երկրի զօրէի տատանումներ: Հաւանականաբար սկսվելով Շամախուց երկրաշարժի ցնցումները արագութեամբ անցել են Բագու, ուր զգալի են եղել ժամի 1-ին, ապա հասել են Զուշի, Անգրկովկասեան երկաթուղու կայարանները՝ Գանձակ, Ալէքսանդրօպօլ:

Շուշուց մեզ գրում են. «Յունվարի 31-ին» ժամը 1-ին կէսօրից լետույ, ինչպէս հեռագրած ենք, քաղաքումս երկրաշարժի զգալի ցնցում տեղի ունեցաւ, որը պարբերաբար սկսեց կրկնվել $7\frac{1}{2}$ — $8\frac{1}{2}$ — $11\frac{1}{2}$ ժամերին երեկոյեան, փետրվարի 1-ին, կէսօր էին, գշերվայ $12\frac{1}{2}$ ժ. առաւօտեան 8 ժամին, ամսիս 2-ին, գիշերվայ $12\frac{1}{2}$ -ին առաւօտեան 1 ժամերին և ամսիս 3-ին, առաւօտեան 4—5—6 ժամերին: Սրանք բոլորն էլ զգալի ցնցումներ էին, բայց կարճ տևողութեամբ, բացի երեք ցնցումից: Վնասները միայն տներին են հասել, բանալով ճեղքւած քներ. մարդիկ անվնաս մնացին: Երկիւղը տիրել է ամենքին: Մարդիկ բոլորը գունատված են. մի փոքր շարժում բաւական է նրանց փողոցները լցնելու, շատերը գշերները չեն քնում, շատերը գշերում են բացօդեայ, շնորհիւ հրաշալի եղանակի, շատերը վերին յարկից իջնում են ներքնայրկերը. շատերը պատասպարվում են բարեկամների, ծանօթների տները, որ տեղ աւելի ապահով տներ կան: Երեկոները

հսկում է կատարվում: Փետրվարի 1-ին մեր լուրվարում լցվել էր հազարաւոր երկսես ամբոխ, կանաչ կարմրի տալով, այեաններից սկսած մինչև ծծկեր մանուկները, բազմած խալիչաների վրա: Շուշին է, որ կարողացաւ դիմանալ այս անսպասելի դէպքին»:

Նուխուց մեզ գրում են. «Յունվարի 31-ին Նուխում տեղի ունեցաւ սաստիկ երկրաշարժ. շարժը պատահեց երեք անգամ, մէկը ցերեկվայ ժամի 12-ին, մէկը երեկոյեան 7-ին, իսկ միւսը գշերվայ ժամի 2-ին: Բայց ցերեկվայ երկրաշարժը ամենից սաստիկ էր, այնպէս որ մի քանի մագաղիններում չթերը թափվեցին պահարաններից, և ժողովուրդը վախենալով դուրս վազեց խանութներից և տներից հրապարակ: Սաստիկ երկրաշարժ եղաւ նոյնպէս փետրվարի 2-ին, ժամը 1-ին»:

Զիբրայելի գաւառի Հադրութ գիւղից մեզ գրում են: «Այսօր, յունվարի 31-ին, կէս օրից լետույ, ժամը 1-ին, սաստիկ երկրաշարժ եղաւ: Հին խրճիթների գերանները կոտրվեցին, կաւ է պատերը փլվեցին, իսկ քարի ու կրի պատերից մի քանիսը ճեղքվեցին: Միևնույն շարժը կրկնվեց և երեկոյեան ժամը 8-ին և գիշերվայ ժամը 12-ին: Շատերը տներից սարսափահար դուրս փախան: Ծեր մարդիկ ասումեն, որ այսպիսի զօրեղ երկրաշարժը իրանց կեանքում չեն տեսած:

Տող գիւղից (Զուշու գաւառ) մեզ գրում են. «Յունվարի 31-ին Տող գիւղում զգացուեցին երկրաշարժի մի քանի հարուածներ. 1) ժամը 2-ին կէս օրից լետույ շատ սաստիկ, որը տեւեց երկուրօպէ, 2) ժամը 3-ին, 3) ժամը 7-ին երեկոյեան

և ժամը 8-ին դարձեալ երեկոյեան. բայց այս վերջին հարուածները շատ թոյլ էին»:

Բագուից գրում են յունվարի 31-ից: «Այսօր, ուղիղ ցերեկվայ ժամը 1-ին, զգացվեց զօրեղ երկրաշարժ: Երկրի տատանումը տևեց մէկու կէս րօպէ, Ջատերը, ստորերկրեայ առաջին հարուածները ըզգալուց յետոյ, թողին խանութները և բնակարանները ու դուրս վազեցին: Առ այժմ պարզված չեն, թէ արգեօք վնաս կրել են շինութիւնները: Թէ ինչպէս է ազդել երկրաշարժը նաւթահանքերի վրայ,—առայժմ տեղեկութիւն չունենմ: Ազգաբնակութիւնը վախեցած է»:

Գանձակից հեռագրում են, յունվարի 31-ից: «Այսօր, ցերեկվայ ժամի 1-ին, զգացվեց երկրաշարժ: Տեղի ունեցան ստորերկրեայ երկու հարուածներ կայարանից դէպի գերմանական գաղթականութիւնը: Հարուածները առանձնապէ՞ զգալի 1-ին մեծ շինութիւնների մէջ, ինչպէս, օրինակ, գիմնագիւղում, նահանգական վարչութեան գիււնատանը և ուրիշներում, որոնց պատերի մէջ ձեղքւած քներ առաջացան: Տների մէջ գտնվողները սարսափահար դուրս վազեցին փողոցները: Գծբախտութիւններ մարդկանց հետ չըպատահեցին»:

Ինչպէս հաղորդում են Անդրկովկասեան երկաթուղու Մուղան, Ալաբաշի և այլ կայարաններից, որ այդ տեղերում ևս յունվարի 31-ին, ցերեկվայ 1—ժամին և 43 րօպէին զգացվել է սաստիկ երկրաշարժ, որից տեղ տեղ կայ—արանների շինութիւնների մէջ առաջացել են ձեղքված քներ:

Ղուբայից գրում են «Այսօր, յունվարի 31-ին, առաւօտեան ժամի 1-ին այստեղ չըլսված ու չըտեսնված երկրաշարժի ցնցումներ եղան, որոնք երկար էին, մօտ երեք վայրկեան տևեցին: Երկրաշարժը հիւսիսից հարաւ ուղղութիւն ունէր: Վախեցողներ շատ են եղել, որոնք բնակարաններից բացօդեայ են դուրս փախչել, իսկ մի քանի թուրք կանայք վայր են ընկել երկիւղից: Վնաս ո՛չ ոքի չէ եղել. շինութիւնները անվնաս են մնացել»:

Արծուանիկ գիւղից մեզ գրում են, «Յունվարի 31-ին կէսօրվայ ժամը 1-ին այստեղ երկրաշարժ եղաւ, որը շարունակվեց մօտ մի րօպէ: Երկրաշարժը զգալի էր արևմուտքից դէպի արևելք: Երեկոյեան 8-ից 20 րօպէ անց, ցնցումը նորից կրկնվեց, բայց առաջիններից թոյլ էր և շարունակվեց մօտ կէս րօպէ»:

Բագուից գրում են «Շամախու երկրաշարժի լուրը հէնց որ հասաւ Բագու, նոյն օրը, յուվարի 31-ին, կազմվեց օգնութեան գործը: Թէպէտ Բագուեցիների համար ներկայումս շատ դժուար է մեծ գումարի մեծ նուիրատվութիւններ անել, այնուամենայնիւ մենք լիայոյս ենք, որ նրանք այս անգամ ևս ցոյց կըտան, որ նրանց սիրտը մեռած չէ դէպի բարի գործը, և կտան, ով ինչքան կարող է: Այդ լուրերը մեծ ցնցում առաջադրին Բագուեցիների մէջ, որովհետև շատերը նրանցից բնիկ շամախեցիներ են, շատերը այսօր

ունեն այնտեղ բազմաթիւ բարեկամներ, ազգականներ և ընկերներ: Մասնաւոր հեռագիրներին պատասխան դժուարութեամբ էր ստացվում: Սակայն մի խումբ շամախեցիներ իսկույն և եթ իրանց կողմից երկու շարք ուղարկեցին, որ տեղն ու տեղը տեսնելով դրութիւնը անմիջապէս հաղորդեն, թէ արդեօք ինչի կարիք կալ:

Բազում օր ըստ օր է նուերատվութիւնների քանակութիւնը մեծ արագութեամբ աճում և բազմանում է: Ամեն կողմից վերահասու և խնամող անձանց թիւը շատանում և մեծ ծաւալ է ստանում: Քաղաքի համարեա բոլոր խանութների քնած առևտուրը այժմ կենդանացել է և տւելի, քան աջող դրութեան մէջ է: Ամեն մէկը պարտք է համարում Չամախում և նրա շրջակայ գիւղերում կենդանի մնացած, կամ, ճիշտն ասած, կեսամեռ դարցած մերկ մարմինները շորերով ծածկել և նրանց հաց հասցնել: Այդ դժբախտներին հազուստեղէն և ուտեստ հասցնելու համար ամէն օր խանութներից կրում են թոփերով չթեղէն ապրանք և պուղերով մթերք: Առաւօտից մինչև երեկոյ անընդհատ բերում և լցնում են այդ նուիրատվութիւններով Հայոց Մարդասիրական ընկերութեան, «Качиніи» խմբագրութեան և մի քանի ուրիշ հիմնարկութիւնների գաւիթները:

ԴԻՆՆ Է 20 ԿՈՊ.

Պահեստը գտնվում է Բաղու, Միրայել, Մա
տինեանցի մօտ:

4941

207

2013

« Ազգային գրադարան



NL0069131

